



«Բարձրացուր զիս, տալով ինձ լոյս եւ շընորի, Որ սիրոսս ըզգայ կեանք ու վայելք նորանոր. եւ Խաչիդ տակ, Խաչիդ համար անխափան, Անզօր շրթունքս ըլլան յաւէտ օրինարան»:

Յարութիւն Քիչ. Սարգիսեան

Ա. ՏԱՐԻ | ԹԻԻ 7 | ՍԵՊՏԵՄԲԵՐ 2007

Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հոգետր Հովիհն ե-նամակի հասցէն՝ derkarnig@sourphagop.com
Ձրի բաժանորդագրման համար՝ gantegh@sourphagop.com
Մեզի հետ կապ պահելու համար՝ eglise58@sourphagop.com

www.sourphagop.org/gantegh

Կանթեղ



ՏՕՆ Ա. ԽԱՉԻ ՎԵՐԱՑՄԱՆ

ԿԻՐԱԿԻ, 16 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2007

Ա. Խաչի չորս տօներ կան. Գիտի, Երեւման, Վերացման եւ Վարագայի (այս վերջինը հայկական է):

Ս. Խաչի Վերացման տօնը չորս յիշատակներ ունի: Ըստ առաջինի, Յակոբոս Տեառն-եղբայր Առաքեալը առիթով մը խաչի ձեռով փայտ մը վեր բարձրացուց՝ իբր նշան Յիսուսի Ս. Խաչը փառատրելու: Ըստ երկրորդի, Հռոմի առաջին քրիստոնէայ կայսրը՝ Կոստանդիանոս իր յաղթանակներու սկզբնաւորութեան Ս. Խաչին տեսիլքը կ'ունենայ եւ անկէ ետք իր զօրքերը կ'առաջնորդէ խաչանշան դրօշակներով: Ըստ երրորդի, Կոստան-

դիանոս կայսրին մօր՝ Հեղինէի հրամանով երբ Ս. Խաչը գտնուեցաւ, զայն առին եւ բարձր բռնած տարին ու դրին Յարութեան տաճարին մէջ (Երուսաղէմ): Ըստ չորրորդի, որ գլխաւոր առիթն է տօնի հաստատման, Երուսաղէմը գրաւուած էր պարսիկ զօրքերուն կողմէ, եւ Ս. Խաչը որպէս աւար Պարսկաստան տարուած: Բիւզանդիոնի կայսր Հերակլ 628-ին կը յաղթէ պարսիկներուն եւ Ս. Խաչը Յարութեան տաճար կը վերադարձնէ: Այն ատեն Ս. Խաչը բարձր բռնուած Հայաստանէն պիտի անցնէր, երթար Կ. Պոլիս, եւ ապա՝ Երուսաղէմ:




Ս. ԽԱՉԸ Ո՞ՒՐ Է ԿԱՍ Ի՞ՆՉ ԵՂԱԻ

Եկեղեցույ մեծ հայրերէն Կիրեղ Երուսաղէմացի 4-րդ դարու կէսին ըսած է, թէ Քրիստոսի Ս. Խաչին մասունքներով լեցուն է ամբողջ աշխարհը: Այս տեղեկութիւնը մեզի կը թելադրէ, որ Ս. Խաչի գտնուելէն անմիջապէս ետք, մասունքներ այն օրերու քրիստոնէայ աշխարհի շատ մը եկեղեցիներու մէջ պաշտամունքի առարկայ էին: Առաջին խաչակրական արշաւանքներուն ատեն (11-րդ դարու վերջաւորութեան), երբ վախի պատճառով պահուած Ս. Խաչը մէջտեղ կը հանուի՝ քաջութիւն ներշնչելու համար, արդէն ոսկեայ խաչանման տուփի մը մէջ ամփոփուած փայտի փոքր կտոր մըն էր: Այս տուփը կը գրաւուէր սուլթան Սալահէտ-տիհի կողմէ 12-րդ դարու վերջաւորութեան, եւ... կ'անհետանար:

ԱՍՏՈՒԾՈՅ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Արամ Ա. Կաթողիկոս իր նոր գիրքին մէջ («For a Church Beyond its Walls», Անթիլիաս, 2007) Ս. Խաչի մասին գրած է. «Christ challenged human power with the cross; He overcame evil with the power of love. Love is at the heart of the Gospel power. The Gospel power is powerlessness. Christ healed and empowered us by carrying our sickness: 'Through his wounds we are healed' (1 Ptr. 2:24). The cross, the supreme expression of powerlessness, became the concrete manifestation of God's power (1 Cor. 1:17-18; Rm. 1:16, Phil. 3:10-11)»: Այսինքն. Քրիստոս մարդկային բիրտ ուժին մարտահրաւէր ուղղեց սիրոյ ուժով: Ան չարին սիրոյ ուժով յաղթեց: Սէրը Աւետարանի ուժին կեդրոնական տարրն է եւ Աւետարանի ուժը անուժութիւն է: Խաչը՝ որ գերագոյն արտայայտութիւնն է անուժութեան՝ դարձաւ առարկայական յայտակերպութիւնը Աստուծոյ ուժին:



ԴԷՊԻ ՅԻՄՆԱՄԵԱԿԸ Ս. ՅԱԿՈԲԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ

ԱՈՍՁԻՆ Ա. ԽԱՉԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՏՕՆԸ:

Սէն Զօթիքի եկեղեցին 4 Յունիս, 1960-ին պիտի օծուէր եւ Ս. Յակոբ կոչուէր: Անկէ առաջ անունն էր՝ «Անդրանիկ Հայց. Առաքելական Եկեղեցի»: Հոն Ս. Խաչի Վերացման առաջին տօնը պիտի կատարուէր 13 Սեպտեմբեր, 1959-ին: Պիտի պատարագէր եւ քարոզէր Տ. Արսէն Ա. Քիչ. Սիմէօնեանց, որ Նիւ Եորքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցույ հովին էր:



HYMNE D'EXALTATION DE LA CROIX

Tu as tendu tes bras immaculés sur la croix, O Christ notre Dieu,
Et nous a donné le signe de la victoire :
Par lui conserve notre vie.

Par les ailes tendues de ta croix salvatrice
du monde, O Christ notre Dieu,
Tu nous as donné un sceptre de
puissance :
Par lui conserve notre vie.

À celui qui est mort en mangeant de
l'arbre interdit
Tu as donné la vie par l'arbre de vie :
Par lui conserve notre vie.

HYMN OF THE EXALTATION OF THE CROSS

You stretched out Your immaculate arms
on the Cross, O Christ our God,
And gave us the sign of victory:
By it preserve our life.

By the outstretched wings of
Your world-saving cross,
O Christ our God,
You gave us a staff of power:
By it preserve our life.

To whom died eating of the
forbidden tree
You gave life by the tree of life:
By it preserve our life.

ՇԱՐԱԿԱՆ Ս. ԽԱՉԻ ՎԵՐԱՑՄԱՆ

Դու՛ն քու անարատ բազուկներդ
խաչին վրայ տարածեցիր, Քրիստոս
Աստուած,
Եւ յաղթանակի նշան տուիր մեզի.
Ասով պահէ մեր կեանքը:

Դու՛ն աշխարհը փրկող բազկատարած
խաչովդ, Քրիստոս Աստուած,
Զօրութեան գաւազան տուիր մեզի.
Ասով պահէ մեր կեանքը:

Դու՛ն յանցանքի ծառին ճաշակումէն
մեռեալը
Կեանքի ծառով կենսագործեցիր.
Ասով պահէ մեր կեանքը:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

1 Սեպտեմբերին Նիկիոյ Ժողովին (325) տօնն է:

Անցեալ ամիս յիշեցինք Եփեսոսի միջ-եկեղեցական (écuménique) մեծ ժողովը, կամ ինչպէս կ'ըսուի՝ Տիեզերական Ժողովը: Եւ այդ առիթով, «Կանթեղ» բացատրեց, թէ Հայ եկեղեցին միայն երեք մեծ ժողովներ կ'ընդունի. Նիկիոյ, Կ. Պոլսոյ եւ Եփեսոսի: Բիւզանդական եւ Հռոմէական եկեղեցիները այլ ժողովներ ալ կ'ընդունին իբր Տիեզերական: «Առանց հիմնական պատճառի չէ որ Հայ եկեղեցին իրաւունք ունեցաւ Եփեսոսի ժողովը (431) իբր վերջին Տիեզերականը նկատել եւ առջեւ չանցնիլ, որովհետեւ անով վերջացաւ բոլոր գլխաւոր եկեղեցիներու համամտութեան շրջանը» (Օրմանեան):

Քրիստոսի անձը մտալին վերլուծումներով չի յայտնուիր, այլ հաւատքի աչքով կը տեսնուի:

ԳՔ

ÉDITORIAL

L'église arménienne reconnaît les lendemains des cinq Fêtes Principales comme jours de souvenir.

Le jour du souvenir est une rétrospective, une célébration des vies et des souvenirs des défunts.

Réfléchissons non seulement aux vies de ceux qui sont morts, mais également à ceux qui sont toujours avec nous, appréciant et reconnaissant les souvenirs que nous prenons tant de mal à créer.

EDITORIAL

The Armenian Church recognizes the day following each of the five Great Feasts as a day of remembrance of the dead.

Remembrance day is a retrospective, a celebration of the lives and memories of the deceased.

May we reflect not only on the lives of those in the after-life, but also those that are still with us, appreciating and acknowledging the memories we work so hard to create.

Please note that this is a simplified explanation of the events in the Armenian church for the month of September. Veuillez noter que ces explications représentent une version simplifiée des cérémonies de l'église arménienne pour le mois de septembre.